

ՄԵԴԱՍԻՍԹԵՄԱՆԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆԵՐԸ ՄՓՅՈՒՌՔՈՒՄ

(1975 թ. հունվար—հունիս)

ՔՈՒՂԱՐԻԱ

Յիշվենում, բուլղարա-սովետական բարեկամության տան սրահում տեղի է ունեցել հանդիպում ժողով՝ նվիրված բուլղարահայ մերենապետականության և «մերենա» թերթի հիմնադրման 30-ամյակին։ Ժողովին ներկա են գտնվել քաղաքի գործադիր կոմիտեի նախագահ Լ. Հայրենյանյան, նախագահի օգնական Կ. Իվանովը, կոմիտեի բարեօրոգար Լ. Աղապարյանը, Գեորգիևով հանդես է եկել վարչության նախագահ Խ. խաչատուրյանը։

Բուլղարահայ «մերենա» կազմակերպության հիմնադրման 30-ամյակին նվիրված հանդիպումներն են տեղի ունեցել նաև Պլովդիվում, Յիվնաբուրյում, Շումենում, Նապոկոմյում, Բուրգասում և այլուր։

«մերենա», հունվար—մարտ

Բուլղարիայում 1916 թ. նոյեմբեր 30-ամյակը «մերենա» տեղական կազմակերպությունների համար կոնյունկտուր էր և Մոֆիայում, Պլովդիվում, Ռուսեում, Բուրգասում, Վստանյում և այլ քաղաքներում, Հանդիսություններին մասնակցել են մեծ թվով բուլղարահայեր։

«մերենա», ապրիլ—մայիս

Մոֆիայի «նարոդնա կույտուրա» (բառարանկալություն) հրատարակել է «Հայկական պատմություններ» ժողովածուն, որ կազմել են Կ. Հայրենյանը և Լ. Որմանյանը։ Ժողովածուում զետեղված են հայ դասական գրողների՝ Բաճիկ, Պարսկյանի, Մուրադյանի, Երվանդյանի, Յուրյանի, Թումանյանի, Իսահակյանի, Գեորգիանի, Զորյանի և Նոր շրջանի մի շարք գրողների գործերը։ Յուրաքանչյուր պատմությանը սկզբում կա համառոտ կենսագրական տեղեկություններ տվյալ հեղինակի մասին։ Ներկա է ժողովածուն։— Ինչպես գրված է «մերենա»

նում։— առաջին փորձն է պուլկար իրականության մեջ այդպիսի լրիվ կերպով ներկայացնել հայ արձակ գրականության դասական ու ժամանակակից ներկայացուցիչները սկսած XIX դարից մինչև մեր օրերը։

Ժողովածուի խմբագիրն է Կ. Չեմենեհյան, իսկ նկարիչը՝ Ա. Կրուկը։

«մերենա», 6 հունիսի

ՋՆԻՈՍՈՒՄՈՒԿՈՒԹՅՈՒՆ

Ջնիական «Տվորրա» հանդեսի վերջին համարներից մեկը նվիրված է Հայաստանին և հայ գրականությանը։ Հանդեսի առաջին էջերում տպագրված են հայազնտ-թարգմանիչ լուսինյա Մոսալովայի «Հայ գրականության ամենադյուրինն ու աշուրը» վերլուծական ակնարկը և «ողված» նվիրված Պարույր Ոսկանի Մոսալովայի թարգմանությունները տպագրված են Ռազմիկ Դավթյանի ներկայացրած թանաստեղծություններ, Լ. Մախնաթյանի «Խոսման» վիպակից հատվածներ։ Ջնիա ընթերցողին էն ներկայացված նաև Լ. Հովսեփյանի և Մ. Տեր-Դուրանյանի մեկական պատմությունները Հաղիսյան կրթական-թարգմանություններ։

Տպագրված է նաև Վիլիս Նավիի «Հայաստանի դարերն ու վաղվա օրերը» ակնարկը, ինչպես նաև ստված են Սովետական Հայաստանը ներկայացնող բազմաթիվ յուսանկարներ։

«Հայրենիքի ձայն», 6 փետրվարի

ԽՈՒՄՈՒՄՈՒՄ

«Նոր կյանքում» տպագրված է ռուսահայ մամուլին նվիրված հոդված, որ ասվում է, որ Ռուսիայում հայերն են քիչ քան սկսել են հրատարակել հայ զաղմականության կողմից XIX դարի վերջից և XX դարի սկզբից։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրերին և պա-

տերազմի տարիներին այդ թերթերը անդադարվել են Քուրբանյի բաղադրական գրությունը, արևմտահայության ազատագրական պայքարին, ուսման հայության կյանքին, թերթերը լուսաբանել են նաև Թուրքիայի զանազան քաղաքներում ապրող հայ բնակչության մշակութային կյանքը, տպագրված են լուրեր պատերազմի ձեռնարկից, տեղեկություններ հայ կամավորների, արևմտահայերի կոտորածների, ուսմանական և ստար բաղադրական շրջանների դիրքավորման մասին այդ իրադարձությունների վերաբերյալ և այլն:

«Նոր կյանք», 25 ապրիլի

ԼԻՍԱՆԱ,

Բնյուսի բաղադրական խորհուրդը որոշել է Բնյուսի փողոցներից մեկը վերանվանել «Արմենիա»:

«Արարատ», 5 մայիսի

Իրանյան հայ Համազգային կենտրոնական մարմինը ապրիլի 24-ին տասնհինգ հասցեներով հոսանքներ է հղել միջազգային ամենահեղինակավոր կազմակերպություններին և պետություններին՝ պահանջելով դատապարտել 1915-ին Քուրբանյի կողմից հայերի դեմ գործադրած ցեղասպանությունը:

Մայիսի 6-ին 100000 հայերի մասնակցությամբ հանդիսավորությամբ ու շուքով նշվել է մեծ եղևոնի ու Իրանյան նահատակների համատեղ հուշամիտինգը:

«Դուստր» օրաթերթի մայիսի 6-ի համարում նյութեր են տպագրված՝ նվիրված մեծ եղևոնի 60-ամյակի ազանդաններին, որ տեղի են ունեցել Բնյուսում, Խմբագրական հոգով ծոմ, որի հեղինակն է թերթի հրատարակիչ Սյնյան Լևոն, Զեյթուն, խոսվում է Երևանի կողմից կատարած անախրեթաց վայրագությունների մասին, Հայկական կոտորածների վերաբերյալ բազմաթիվ նյութեր են տպագրել նաև իրանահայ թերթերը:

Իրանյան համալսարանում իրանահայ դեմոկրատ ուսանողների նախաձեռնությամբ և

հարյուրավոր արար և հայ ուսանողների մասնակցությամբ տեղի է ունեցել երեկո՝ նվիրված մեծ եղևոնի 60-ամյակին, նախագահել է Իրան Իսմայիլը, որի առաջարկով ներկաները մեկ րոպե լուսությամբ հարցել են գոհների հիշատակը, Առաջինը Էլյույի է ունեցել իրանական համալսարանի Ուսանողների միության կենտրոնական խորհրդի նախագահ Անվար Ֆաթայիին, Պաղեստինյան դեմագրական շարժման կողմից խոսք է վերցրել Եաֆիթ Էլ-Հուսեյն, որն է միտայլոց առել է, «Աղետ, կոտորած, սարդ բառերը չեն կրնար նկարագրել այն, ինչ որ թուրք ռոնատները գործեցին հայ ժողովուրդին դեմ առաջին աշխարհամարտի ընթացքին», Լևոն իրանահայ դեմոկրատ ուսանողների կողմից Էլյույի է ունեցել Պաղեստինյան արարներն լեզվով:

«Արարատ», «Զարթոնք»:

«Արև», մարտ—մայիս

ԻԿԻՊՏԱՍ

Կահիրեի ամերիկյան համալսարանում ապրիլի 24-ին կազմակերպվել է ազանդան, որին մասնակցել են հայ և օտար պաշտոնական բարձրաստիճան անձինք, Կիպրոսի դեսպան Ն. Վ. Անթիս Սոթերիատեսը, գանազան դեսպանություններ, մշակույթի և մամուլի ներկայացուցիչներ, ինչպես և հոծ բազմություն Լիույթ ունեցողների մեծ է եղել նաև Կիպրոսի դեսպան Անթիս Սոթերիատեսը, որը նշել է հայ և հույն ժողովուրդների համար արհաճիրքի օնույնյառի սև երկու թվականները 1915 և 1922՝ ապրիլյան եղևոնը և Բեմերի գարնոսրեյի ջարդը, Երկուսն էլ կատարված ժամանակյան տխուրություն կողմից: Դեսպանը հայտնել է, որ Կիպրոսի հույն ժողովուրդը բաժանում է հայության վիշտը:

Կահիրեի ազգային առաջնորդարանի նախաձեռնությամբ և մշակութային ու մարզական կազմակերպությունների մասնակցությամբ ապրիլի 24-ին տեղի է ունեցել երեկո՝ նվիրված մեծ եղևոնի 60-ամյակին, Ելույթները եղել են հայերեն, ֆրանսերեն և արաբերեն լեզուներով:

Ապրիլյան եղևոնի 60-ամյակը ապրիլի 6-ին նշվել է նաև Ալեքսանդրիայում:

«Արև», 11, 23, 29 ապրիլի

«Զարթոնք», 21 մայիսի

ՉԻՐԻՒՆ

Դամասկոսում շուրջի նշվել է մեծ եղևնի 60-ամյակը:

Հայկազում 60 հայ երիտասարդներից կազմված մի խումբ ապրիլի 24-ին եկեղեցական արարողություններից հետո Հալեպի Արյան պահեստատուն է գնացել արյուն տալու համար ի հիշատակ Սիրիական տնայալստու՝ նահատակված հայ ժողովրդի և ի հրախուսողություն արքայական երկրի:

«Արարատ», 12, 20, 21 մայիսի

ՔԻՐԱՆ

Թեհրանի «Արժանատի» հրատարակությունը յույս է ընծայել «Մադրանե դար Արման» («Հայոց Մայրականը») խորագրով պարսկերեն ժողովածու, որ տեղ են գտել սովետահայ մի խումբ բանաստեղծների մայրական թեմայով գրված ստեղծագործությունները: Դիրքը թարգմանել և կազմել է Այնե Խաչատրյանը: Ժողովածուում բերված են Իրանի նշանավոր դրամատուրգների կարծիքները հայ գրականության մասին:

«Արարատ», 19 հունիսի

Ենոր կյանքը թերթի սովորներով Հյուսիսային Իրանում վերանորոգում են հրեր հայկական հին եկեղեցիներ ու վանքեր՝ հռչակ Ս. Սարգիս եկեղեցին, ինչպես նաև Ս. Թադեոս և Ս. Ստեփանոս վանքերը: Վերանորոգումները կատարվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասնագետ, պրոֆ. Էդուարդ Յուրույանի նախագծով, որը իրանական կառավարության կողմից հրավիրվել է վերահիշյալ աշխատանքները կատարելու համար:

«Ենոր կյանք», 21 հունվարի

Ապրիլի 25-ին Թեհրանի հայությունը կազմակերպել է հանդիսություն ի հիշատակ 1915 թ. նահատակված մեկ և կես միլիոն հայերի, որին մասնակցել են 20 հազար հայեր: Մի քանի հոգի ելույթներ են ունեցել, որից հետո ընթերցվել է Իրանի շահին ուղղված հուշագիրը: Հատուկ պատվիրակությունը այդ հուշագիրը հանձնել է շահին:

Հուշահանգիստներ են եղել նաև Նոր Զուղալում, Ահվազում, Ղազվինում և Բեղաջում:

«Զարթոնք», 16 մայիսի
«Արարատ», 5 մայիսի

ՅՐԱՆՍԻՒՆ

Ֆրանսիական «Հարուստ» հանրագիտարանը իր վերջին հրատարակության մեջ բավական մեծ հոդված է զետեղել Հայաստանի մասին՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը, որ հիշվում են հայ ժողովրդի դարավոր տառտալները: Օտար նվաճողների յժի տուկ, նրա ազատագրական պայքարը և ժողովրդի ազատագրությունը՝ շեղահիվ սովետական իշխանության, Հոգվածում նշված է հայ ժողովրդի ներդրումը համաշխարհային արվեստի գանձարանում, հասկացիկ ճարտարապետության, մանրանկարչության, գրքականության ուղղությամբ: Վերջում խոսվում է Սովետական Հայաստանի հաղորդությունների մասին ժողովրդական տնտեսության, դիտություն ու արվեստի բնագավառներում:

«Երևան», 18 ապրիլի

Մարտի 1-ին Ֆրանսիայի լեզվով սկսել է յույս տեսնել «Արմենիա» պատկերազարդ ամսագիր՝ Օհան Հևրիմյանի խմբագրությամբ: Ամսագրի հիմնական նպատակն է ֆրանսիացիներին ծանոթացնել Սովետական Հայաստանի պատմության, գրականության և մշակույթի նվաճումներին:

«Ենոր կյանք», 21 մարտի

Ապրիլի 24-ին Փարիզի Փոլյեխի մեծ դահլիճում բոլոր հայ կազմակերպությունների մասնակցությամբ և քաղաքագար իտալացիների ներկայությամբ տեղի է ունեցել 1915-ի հայ նահատակներին նվիրված հիշատակի երեկո: Բաց է արել երեկոյն Սերովիկ Մանուկյանը, այնուհետև ելույթներ են ունեցել Եկարի Զ. Մուրադյանը, Գ. Սիսյանը, Ալֆրեդի Զաղարապետ Ժ. Ֆրանկիսի Ֆրանսիացի ժողովրդի համերաշխությունն ու համակրությունն է հայտնել հայ ժողովրդի նկատմամբ: Ելույթ է ունեցել նաև բանաստեղծ Ռուբեն Մելիքը: Հանդիսության երկրորդ մասում տեղի է ունեցել հոխ համերգ:

Մեծ եղևնի 60-ամյակը նշվել է Մարտիում, Նիցցայում, Վալանում, Էքս-ան-Պրովանսում: Բազմաթիվ հոգվածներ են տպագրվել հայկական և ֆրանսիական թերթերում:

Մարտի 1-ին 5000 հայեր ապրիլի 24-ին հրթր են կազմակերպել Փրատո պողոտայում, որին

մասնակցել են բարձրաստիճան անձներ, հայ կաղամակերպությունների ներկայացուցիչներ և բաղամահադար ժողովուրդ։ Այնուհետև ժողովին հրավերվեց «Կոնգրես» դահլիճում կատարվել է սգահանդես, որի ժամանակ ելույթ ունեցողները դատապարտել են 1915-ի աննախընթաց այդ ցեղասպանությունը։

Փարիզի «Ֆլամարիոն» հրատարակչությունը լույս է բնծայել նշանավոր նկարիչ Բառդուի որդու՝ Ժան-Մարի Գառուի ժառանգականությանը, 1915-ի 252 էջանոց գիրքը ֆրանսերեն լեզվով։

«Աշխարհ», «Զարթոնք»,
ապրիլ—հունիս

ԱՆՓԻՒԱ

Ապրիլի 14-ին Կենտրոնական խոհանարարի Պոլիտեխնիկ սրահում կաղամակերպվել է Բ. Մ. Լանդի դասախոսությունը՝ «Հայաստանը քաղաքակրթության օրրան» թեմայով։ Ապրիլի 20-ին տեղի է ունեցել հուշատոնի երեկո, որտեղ հայերեն և անգլերեն ելույթներ են եղել և ապա՝ գեղարվեստական բաժին։

«Թալմսի» ապրիլի 19-ի համարում անգլիացի հրապարակագիր Քրիստոֆեր Ուորթը հոգոված է հրապարակել, որ խոսելով 1915 թ. եղեռնի մասին, նշում է, որ Թուրքիային այդ ոճիրին մղողը եղել է պանթուրիզմի գաղափարը, որի տեսության Ձիա Գյուրալփի կարծիքով ժողովուրդը անհրաժեշտ էին այդ ժողովուրդի իրականացման համար. առաջին՝ թրքական կառավարությունը կայսրության մեջ բնակող բոլոր տարբեր ազգությունները պետք է թրքացնեն (անգլիացի դիվանագետի մը բառերով՝ «բոլոր ոչ-թուրք տարրերը փոշիացնել թրքական սանդիկ մեջ»)։ Երկրորդ՝ կայսրությունը պետք է տարածվի դեպի արևելք, մինչև Կասպից ծով (և գրավի Բարուն իր նավթահանքերով), չվերակերտելու համար Օդոդի թրքական միջնադարյան երազը հոս, հատկանշականորեն, պատմական առասպել մը գործածված էր ցեղապաշտ և ծավալապաշտ բիրտ քաղաքականություն մը արդարացնելու համար։ Երրորդ՝ Պոլիսն Սիպերիա տարածված թրքախոս բոլոր ժողովուրդները պետք է միանան։ Այնուհետև որ ընդդիմանային՝ անխուսափելիորեն պետք է կործանելին։ Պատերազ-

մեն ետք, ոչ մեկ թուրք ղեկավար դատվեցավ պատերազմական ոճիրներու համար... Ընդհակառակը, Պոլսո մեջ հուշարձան մը կանգնեցված է Բալեթի հիշատակին, իսկ Անքարայի մեջ թաղ մը կոչված է Ձիա Գյուրալփի անունով։

Ապրիլի 23-ին երիտասարդության կողմից տարածվել է 50000 թերթն՝ «Իվնիկ Վիուդ» վերնագրով, որտեղ դատապարտված է 60 տարի առաջ գործադրված աննախընթաց ցեղասպանությունը։ Ապրիլի 24-ին համաժողովրդային խաղաղ ցույց է տեղի ունեցել երկու հազար հայերի և հինգ հարյուր հույն կիպրացիների մասնակցությամբ։ Ցույցին մասնակցել է լոնդոնի, Մանչեստրի և Օքսֆորդի հայությունը։ Նույն օրը լոնդոնի Հայ ազգային հանձնախումբը դիմել է Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստր Հարոլդ Վիլսոնին, որպեսզի նրա կառավարությունը դատապարտի ցեղասպանությունը։

Հուլիսի 1-ին հանձնվել է Թուրքիայի և Միացյալ Նահանգների դեսպաններին, հետագիտ է ուղարկվել ՄԱԿ-ի քարտուղարությունը։

«Զարթոնք», 1, 25 մայիսի
«Արարատ», 6 մայիսի

ԻՏԱԼԻԱ

Ապրիլի 18-ին Միլանում Մարդկային իրավունքների միջազգային լիգայի իտալական բաժնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել հայկական ցեղասպանության 60-ամյակին նվիրված հուշ-երեկո։ Նախագահել է դոկտ. Զորջե դի Գրեգորին, ելույթ են ունեցել լիգայի քարտուղար պրոֆ. Զուգրապե Պրամարոն և դոկտ. Տիգրան Ալեքսանյանը, որոնք խոսել են Հայաստանի պատմության կարևոր անցքերի մասին, ներկայացնելով մշակույթի բնագավառում սովորական հայ ժողովրդի հաջողությունները։

«Զարթոնք», 25 մայիսի

ՇՎԵՑԻԱ

Շվեդացի հայ գաղութը նշել է ապրիլյան եղեռնի 60-ամյակը։ Կաղամակերպիչ հանձնախումբը, որ բաղկացած է եղել շվեդացի հայ բոլոր միություններից, Հայաստանի պատմության մասին հակիրճ ու սեղմ մի գրքուկ է հրատարակել ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով։

Ապրիլի 24-ին Ժնևի Հայոց եկեղեցու բակում

Հանդիսավոր պայմաններում կատարվել է Հայաստանից բերված XVI դարի խաչքարի բացումը: Այնուհետև տեղի է ունեցել երգահանդես. օտարազգի հասարակության մոտ 3000 ներկայացուցիչներ ծանոթացել են հայ արվեստին:

Շվեյցարական «Ժուրնալ դը Ժնև» թերթը 1975 թ. մայիսի 26-ի համարում Միլեն Կալամի ստորագրությամբ ընդարձակ հոդված է լույս ընծայել մեծ եղեռնի 60-ամյակի առթիվ:

«Արև», 3 հունիսի

ՄՈՆԱԿՈ

Մոնտե Կարլոյի ռադիոկայանը մայիսի 3-ին մի հանգամանակից հաղորդում է տվել 1915 թ. հայկական կոտորածների մասին:

«Զարթոնք», 4 մայիսի

ԱՎՍՏՐԻԱ

Վիեննայի հայ համայնքը կազմել է Ապրիլյան եղեռնի 60-ամյակի հանձնախումբ՝ բաղկացած բարեգործական միության, եկեղեցու վարչության, Հայ ուսանողական և երիտասարդական միության անդամներից: Հանձնախմբի կազմի մեջ է մտել նաև տիկ. Էլիզաբեթ Բաուերը, որը վերջին տարիներին Ավստրիայի բոլոր լրագրերում հոգվածներ է գրում հայ ժողովրդի և նրա մշակույթի մասին:

Ապրիլի 19-ին «Արքայտեր Ցայտունդ» թերթում լույս է տեսել տիկ. Բաուերի հոդվածը «Մոռացված ցեղասպանություն» խորագրով: Տիկ. Բաուերը հոգվածներ է հրատարակել նաև «Վինըր Ցայտունդ», «Զալցբուրգ Նախրիխտեն» թերթերում: Ի հիշատակ 1915 թ. կոտորածների զոհերի, ապրիլի 21-ին Հայ ուսանողական և երիտասարդական միության կողմից կազմված մի պատվիրակություն Մարդասիրական ընկերության կենտրոնին է հանձնել 20000 շիլինգ, իսկ ապրիլի 23-ին Ավստրիական Կարմիր խաչին բաղմաթիվ հայեր իրենց արյունն են նվիրել: Ապրիլի 24-ին եկեղեցու բակում երիտասարդները և ուսանողները ծաղկեպսակներ են դրել այն տեղում, ուր պիտի հուշարձան կանգնեցվի: Այնուհետև տեղի է ունեցել սգահանդես:

«Արև», 30 մայիսի

ԿԻՊՐՈՍ

«Կիպրոսի վերապրումի հանձնախումբի» 1975 թ. ապրիլ-մայիսի տեղեկատուի տվյալնե-

րով 1960 թ. Կիպրոսում կային 6500 հայեր, 1975-ին՝ հազիվ 2000: Հայերի մեծ մասը Կիպրոս է գաղթել դարի առաջին քառորդին:

«Զարթոնք», 4 հունիսի

Ապրիլի 22-ին Նիկոզիայի հայությունը և բաղմաթիվ հույներ հավաքվել են մայրաքաղաքի գլխավոր հրապարակը, որտեղ նախապես դրվել է 1915 թ. եղեռնին նվիրված հուշաքար, որի վրա ծաղկեպսակներ ու ջահեր են դրել բաղմաթիվ հայեր, ինչպես նաև Կիպրոսի Հանրապետության նախագահ արքեպիսկոպոս Մակարիոսի անձնական քարտուղարը, հունական կուսակցությունների ներկայացուցիչները: Հեռուստացույցը և մամուլը լայնորեն լուսարանել են եղեռնի պատմությունը: Հեռագիր և հուշագրեր են ուղարկվել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի անունով և օտար դեսպանատներին:

Կիպրոսի խորհրդարանը ապրիլի 24-ին հատուկ նիստ է դումարել իր հարգանքի տուրքը մատուցելու 1500000 հայ նահատակներին:

«Զարթոնք», 7 մայիսի

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Ապրիլի 20-ին Աթենքում հանդիսավորությամբ նշվեց 1915-ի եղեռնի զոհերի հիշատակը: Ելույթներ են ունեցել նաև հույն պաշտոնական անձինք: Հրապարակվել է 60-ամյակի հանձնախմբի հղած նամակը Հունաստանի Հանրապետության նախագահին: Այնուհետև կարդացվել է Կիպրոսի պրեզիդենտ արքեպիսկոպոս Մակարիոսի նամակը, ուր, ի միջի այլոց, ասված է. «Հայկական եղեռնի 60-ամյակը մեր հիշողության մեջ կվերակենդանացնե՝ աշխարհի հնագույն ազգերեն մեկուն դեմ Թուրքիո կողմն գործադրված ահավոր ոճիրը: Հայերու բնաջնջման ծրագիրը, իրականության մեջ, սկսած էր շատ ավելի կանուխ և սաստկացած ԺԹ դարու վերջերուն: ... 1915-ին հայոց վրա ի գործ դրված ցեղասպանությունը համաշխարհային պատմության համար անպատվություն մըն է և սև արատ մը»:

Թափորը դահիճներին դատապարտող հայերեն, հունարեն և անգլերեն լեզուներով գրված լուղունգներով ուղղվել է դեպի Անհայտ զինվորի հուշադամարանը և դափնեպսակ դրել նրա վրա: Աթենքի ռադիոն և թերթերը նույնպես անդրադարձել են եղեռնի 60-ամյակին:

«Զարթոնք», 4 մայիսի

«Արարատ», 5 մայիսի

Ա Մ Ն

Մարտի 3-ին Ֆրեդնոյում Շ. Բ. Ը. Միոթյան քանքերով բացվել է նոր հայկական դպրոց, որի տնօրենն է Զորջ Գըլըջյանը։ Այդտեղ ուսանելու են 75 աշակերտներ։ Բացման արարողությունից հետո հյուրերը և ծնողները ծանոթացել են ցուցադրված հայկական մանրանկարչության, պատմական հուշամատյանների և բազմաթիվ ալբոմների հետ, որոնք հրատարակվել են Սովետական Հայաստանում։

«Լրաբեր», 29 մարտի

Հարվարդի համալսարանի գիտական կենտրոնում ցուցադրվել են սովետահայ ականավոր նկարիչ Մինաս Ավետիսյանի մի շարք նկարները, որոնք վերցված են ԱՄՆ-ում գտնվող անհատական հավաքածուներից։ Ցուցահանդեսը կազմակերպել է հայ նկարիչների ընկերությունը։

«Նոր կյանք», 4 հուլիսի

Բոստոնի Թեքյան Մշակութային միությունը կազմակերպել է դասախոսությունների շարք՝ նվիրված գրականության պատմությանը։ Մարտի 14-ին «Պայքար» սրահում տեղի է ունեցել դասախոսություն՝ նվիրված Գրիգոր Զոհրապի կյանքին և նրա գրական, ազգային-հասարակական գործունեությանը։

«Պայքար», 22 մարտի

Վաշինգտոնում և ղեռնի 60-ամյակի կապակցությամբ ցույց է կազմակերպվել, որին մասնակցել են 1500 ցուցարարներ։ Սգահանդեսին ելույթներ են ունեցել Փլըսի Սարգիսյանը, Աննա Աթանասյանը, Արամ Գալուստյանը, Գրիգոր Վահկացին, ինչպես նաև մի քանի սենատորներ։ Ցուցարարները ուղղվել են դեպի Սպիտակ Տուն, որի կաֆայետ դրոսագույն շարունակվել է միտինգը։ Ցույցերը և միտինգը հաղորդվել են ռադիոյով, «Վաշինգտոն փոստը» լայնորեն անդրադարձել է դրան։ «Նյու-Յորք թայմսը» և «Դեյլի նյուսը» ապրիլի 24-ի իրենց համարներում առանձին հոդվածներով անդրադարձել են 1915-ի ցեղասպանությանը։

Մեծ եղեռնի 60-ամյակի հուշատոներ են տեղի ունեցել նաև Ֆրեդնոյում, Զիկագոյում, Կլիվլենդում։ «Զիկագո նյուս», «Դեյլի նյուս» և մի շարք այլ թերթերում լույս են տեսել 1915-ի

ցեղասպանությանը նվիրված խմբագրականներ և հոդվածներ։

«Արարատ», 5, 10, 12 մայիսի
21 հունիսի

Նյու-Յորքում ապրիլի 24-ին եղեռնի 60-ամյակի կապակցությամբ տեղի է ունեցել երթ 12000 հայերի մասնակցությամբ։ Ցուցարարների մի մասը եկել է Բոստոնից, Ուստրից, Պրովիդենսից և Սպրինգֆիլդից։ Ցույցեր և երթեր տեղի են ունեցել նաև Բոստոնում, Դետրոյտում, Լոս-Անջելեսում և այլ քաղաքներում։

«Արև», 12 մայիսի

Վիսկոնսին նահանգի հայությունը ևս մեծ շուքով նշել է մեծ եղեռնի նահատակների հիշատակը։ Ապրիլի 20-ին Միլուոկիի հեռուստատեսությամբ անգլերեն լեզվով վավերագրական կինոնկար է ցուցադրվել «Ուր է ժողովուրդս», որտեղ ներկայացված է հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը և հայոց եղեռնը։ Կազմակերպվել է նաև սգահանդես, որի ժամանակ բազմաթիվ ելույթներ են եղել։ Վիսկոնսինի նահանգապետ Լյուսին ապրիլի 24-ը հռչակել է «Հայ նահատակաց օր»։ Տեղական թերթերում տպագրված են շատ հոդվածներ։

«Ջարթոնք», 14 հունիսի

Կալիֆոռնիայի նահանգի կոնգրեսը ընդունել է պաշտոնական հայտարարություն, որի տեքստը թարգմանաբար տպված է «Ջարթոնքում»։ Հայտարարության մեջ ասված է, որ Սենատի և ներկայացուցիչների պալատի օրենսդրական միացյալ հանձնախումբը, նկատի առնելով մի շարք հանգամանքներ, «կորոշել 24 ապրիլ 1975-ը հայտարարել «Մարդու անմարդկայնությունը մարդու դեմ հիշատակելու օր»։

«Ջարթոնք», 4 մայիսի

ԿԱՆԱԴԱ

Տորոնտոյի «Նոր սերունդ» ամսաթերթի խմբագրության նախաձեռնությամբ կազմակերպվել է պարբերական մամուլի ցուցահանդես՝ նվիրված հայ մշակույթի օրվան և հայ մամուլի ստեղծման 180-ամյակին։ Ցուցահանդեսում հատուկ բաժին է հատկացվել Սովետական Հայաստանի հրատարակություններին։

«Հայրենիքի ձայն», 12 փետրվարի

Մոնրեալում. ապրիլի 25-ին Կլոդ Շամպայն քրահում պաշտոնական անձանց, թղթակիցների և մամուլի զանազան զործակալությունների ներկայացուցիչների ու հայ հասարակայնության մասնակցությամբ տեղի է ունեցել սգահանգեստ՝ Վեց հոգի ելույթներ են ունեցել Ֆրանսերեն, անգլերեն, հայերեն լեզուներով։ Վերջում տրվել է գեղարվեստական բաժին։

Վանկուվերի հալ գաղութը ապրիլի 21—27-ը հայտարարել է Ապրիլյան եղեռնի 60-ամյակի հուշատոնի շարաթ։

«Արև», 31 մայիսի
«Արարատ», 30 մայիսի

Օտտավայի «Էր Դրուայի» ապրիլի 24-ի համարում նորման Մեսիեի ստորագրությամբ խմբագրական հոդված է տպագրված «La génocide armenien» վերնագրով։

Քվեբեկում լույս տեսնող «Լը Սուլեյ» օրաթերթը ապրիլի 22-ին տպագրել է «Հայոց ցեղասպանությունը» հոդվածը, ուր ի միջի այլոց ասվում է. «...Հայերը այս շարաթ պիտի ոգեկոչեն այն՝ ինչ որ կրնանք որակել XX դարու կանոնավոր կերպով կազմակերպված առաջին ցեղասպանությունը—վախճան տարիներ առաջ Թուրքիո հայոց բնաջնջումը 1915-ի ապրիլին։ ...Թրքական կառավարությունը այն ատեն առաջադրած էր վերջնականորեն լուծել Հայկական հարցը, ինչպես անկե 25 տարիներ ետք Հիթլեր ջանաց լուծել Հրեական հարցը։ ... 1915-ի հայոց ցեղասպանությունը մարդկության համար կմնա արտու մը»։

«Զարթոնք», 20 մայիսի

ԱՐԳԻՆՏԻՆԱ

Արգենտինայի հայ բնակչությունը արժանավայել շուքով նշել է եղեռնի 60-ամյակը։ Ապրիլի 22-ին տեղի է ունեցել հանդիսավոր նիստ, որին ներկա են գտնվել պաշտոնական անձինք, մամուլի, ուղիղի և հեռուստատեսության թղթակիցներ և հազարից ավելի հանդիսականներ։ Ելույթներ են ունեցել Եփրատ Պայրամյանը, պատմաբան էներիկե Պավոն Պերեյրան, դոկտ. Անստոնիո Տրոկոլին։ Այնուհետև տրվել է գեղարվեստական բաժին։

Արգենտինյան մամուլի բազմաթիվ օրգաններ, ինչպես նաև ուղիղի և հեռուստատեսու-

թյան կայանները հոգվածներով և հաղորդումներով արձագանքել են հայկական կոտորածների տարեդարձին։

«Լա օփինիոն» թերթը ապրիլի 24-ի իր համարում Ալբերտո Պերեսի ստորագրությամբ մի հոդված է տպագրել, որտեղ խոսելով հայերի ցեղասպանության մասին, գրել է. «Ատոլֆ Հիթլեր անձանոթ մըն էր տակավին և ցեղասպանություն» բառը ընթացիկ զործածության մեջ չէր միջադգային իրավունքի մեջ, երբ հայ ժողովուրդը իր մարմինն վրա կրեց դայն»։

«Վերիտաս», «Սեմանա Պոլիտիկա» և տեղի հայկական «Սեան» և «Շարժում» թերթերը մանրամասնորեն անդրադարձել են 1915 թ. եղեռնին։

«Զարթոնք», «Շարժում», «Սեան»,
մայիս—հունիս

ԲԲԱԶԻԼԻԱ

Բրազիլիայի հայ գաղութը հաշվում է մոտ 12000 մարդ՝ Սան-Պաուլոյում և 3000 հոգի՝ այլ բազմաքանակությամբ Սան-Պաուլոյում կա Դուրյանի անվան Նախակրթական դպրոց, 150 աշակերտով և եկեղեցի։ Գաղութում կա ՀԲԸՄ-ի մասնաճյուղ, մի շարք հայրենակցական միություններ, Կարմիր եռանկ և այլն։ Կազմակերպվում են մշակութային միջոցառումներ, երեկոներ։

Ռիո դե Ժանեյրոյի փոքրաթիվ համայնքը ունի մշակութային և մարզական սրահ՝ «Մոնտե Արարատ» անունով։

«Պայքար», 3 հունվարի

Սան-Պաուլոյում նշվել է մեծ եղեռնի 60-ամյակը։ Ապրիլի 24-ին Հայ Կեդրոնի սրահում տեղի է ունեցել սգահանգեստ, որի ղեկավար գեկուցողն է եղել Սան-Պաուլոյի զինվորական ատյանի դատախազ պր. Ուալթեր Քոտին, որն իր հանգամանալից ելույթում հայոց ողբերգության առթիվ բերել է Ֆրանսիական և անգլիական պատմավիդերների և հուշագիրների վկայություններ, հատկապես Լորդ Բրայսից, Տրվել է նաև գեղարվեստական բաժին։ Այնուհետև կարդացվել են Բրազիլիայի Թուրքական հյուպատոսին և ՄԱԿ-ի քարտուղարությանը ուղղված հեռագրեր։

Ապրիլի 27-ին Բրազիլահայերը ծաղկեպսակներ են դրել մեծ եղեռնի հուշարձանի մոտ և Բրազիլիայի «Անձանոթ զինվորի» հուշարձա-

նին, որպես երախտիք Բրազիլիայի կառավարությանը, Հանդիսություններին ներկա են եղել պետական բարձրաստիճան անձնավորություններ և օտարերկրյա թղթակիցներ: Տեղական թերթերը պատշաճ կերպով արձագանքել են այս սրբատոնին:

«Զարթոնք», 25 մայիսի

ՈՒՐՈՒԴՎԱՅ

Մոնտեվիդեոյում Ապրիլյան եղեռնի 60-ամյակի սգահանդեսները կատարվել են մեծ շուքով:

Ապրիլի 24-ին պետական գրադարանի դահլիճում հավաքվել են հազարից ավելի հայեր և այլազգիներ: Ելույթ են ունեցել պր. Կարլոս

Վարելա Ռոդրիգեսը և Տաճատ Գնդունին: Ներկա են եղել պետական, հասարակական և մշակույթի բազմաթիվ գործիչներ, ինչպես նաև Հունաստանի դեսպանը: Հանդիսության վերջում Պլասա Արմենիայում 1500 ունկնդիրների առաջ ելույթ է ունեցել Ուրուգվայի մտավորականության ճանաչված ներկայացուցիչներից մեկը՝ էսքուատորային:

Ուրուգվայի մամուլի պաշտոնական օրգանները լայնորեն լուսաբանել են 1915 թ. մեծ ոճիրի վաթսունամյակին նվիրված ցույցերը:

«Արարատ», 11 հունիսի:

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ.